

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ
17 ապրիլի, 2020 N 7

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 5
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի ապրիլի 14-ի «Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմով պայմանավորված անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 5 որոշման 2-րդ կետից հանել «Քաշաթաղի շրջանի Միրիկ, Մոշաթաղ, Ծիծեռնավանք» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:


 **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**